

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ
ՈՐՈՇՈՒՄ թիվ 012198/16
ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ԳՈՐԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ես՝ ՀՀ ՊԵԿ իրավաբանական վարչության պետ Ա. Մնացականյանս, ուսումնասիրելով 20.05.2021 թվականի թիվ 12198 վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը, քննելով թիվ _____ վարույթը և կից նյութերը,

ՊԱՐԶԵՑԻ

<<Կառա և Կարեն>> ՍՊԸ-ի /ՀՎՀՀ՝ 06901249/ տնօրեն Կարինե Ղուկասյանը /հասցե՝ ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 24 27, ՀԾՀ՝ 5712680254/ «ՀՀ և ԵՏՄ անդամ պետությունների միջև անուղղակի հարկերի հաշվարկման և վճարման առանձնահատկությունների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետում չի ներկայացրել 27.02.2021թ-ի ներմուծման հարկային հայտարարագիրը և հայտարարությունը, որի համար նախատեսվում է պատասխանատվություն Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169՝ հոդվածի 2-րդ մասով:

Կողմին հայտնաբերելու համար ձեռնարկվել են համապատասխան միջոցներ: Գործում առկա չէ առարկություն կամ բացատրություն:

Համաձայն ՀՀ ՊԵԿ տեղեկատվական բազայում առկա տվյալների Կարինե Ղուկասյանը 27.02.2021թ-ին իրականացված ներմուծման վերաբերյալ ներմուծման հարկային հայտարարագիրը և հայտարարությունը ներկայացրել է 19.05.2021թ-ին, հաշվարկից առաջացել է 9.681 ՀՀ դրամ հարկային պարտավորություն, ուստի իրավախախտումը ունի նվազ նշանակություն:

Նկատի ունենալով իրավախախտման նվազ նշանակություն ունենալու հանգամանքը, ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածով, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 21-րդ, 32-րդ հոդվածի 2-րդ մասով, 282, 244² հոդվածներով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. Համաձայն Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 21-րդ հոդվածի՝ Կարինե Ղուկասյանին ազատել վարչական պատասխանատվությունից՝ հայտարարել բանավոր դիտողություն:
2. Կարինե Ղուկասյանի նկատմամբ հարուցված վարչական վարույթը կարճել:

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ



Ա. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի որոշման դեմ գանգատ կարող է տրվել որոշում քննարկելու օրվանից հետո երեսուն օրվա ընթացքում: Նշված ժամկետը հարգելի պատճառներով բաց թողնելու դեպքում այն ժամկետը կարող է վերականգնվել գանգատը քննելու համար իրավագոր մարմնի (պաշտոնատար անձի) կողմից, այն անձի դիմումով, որի նկատմամբ ընդունված է որոշումը (հոդված 288) կամ որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:

Մասնակցեցի գործի քննությանը, որոշման վերաբերյալ առարկություններ չունեմ

(ստորագրություն)